Ը Ն Կ Ա Ծ Ը

«Ով ձեղնից անմեղ է, թող առաջ նա՛
քար գցի դրա վրայ»։
Աւետարան

I

Աղաղակ, գոռում-գոչյուն... «Մահ, մահ չնացողին, քարկոծել, ոտի տակ տալ անբարոյականին», լսւում էր այդ աղաղակի միջից։ Ծուղուած, կատաղած ամբոխը առաջն արած մի կին փողոցից փողոց էր անցնում և իր խումբը ստուարացնում նորանոր եկուորներով։ Մարդիկ թքում, հայհոյում էին կնոջը, իսկ կանայք, կատաղած վագրերի նման, քիչ էր մնում յարձակուէին յանցաւորի վրայ և ծվիկ-ծվիկ ճղճղէին նրա հագի գեղեցիկ շորերը։ Նրանք չէին կարողանում իրանց սրտի ուզածը անել, բաւականանում էին միայն ձեռքերի չարժումներով և դէմքերի արտայայտութեամբ իրանց անասելի ատելութիւնն ու զզուանքը ցոյց տալ։

Քահանայապետները, փարիսեցիները, դպիրները, դատաւորները—արդարութեան երդուեալ պաշտպանները, անմեղութեան ու առաքինութեան փայլով գոյն տուած արցունքները աչքներին, անհուն բարոյականութիւն արտայայտող դողդոջուն ձեռքերը երկինք կարկառած Աստուած էին կանչում՝ խնայել անմեղ ժողովրդին, մեղաւորի յանցանքի համար անմեղներին չը դատապարտել։

Ընկած կինը մէկ ժպիտը բերանին, սիրալիր կերպարանք առած, մէկ դողդոջ չրթունքներով, սեւորակ աչքերում արցունքը չարժած, դիմում էր սրան նրան, աղաչել իրան ամբոխի ձեռքից, բայց ոչ ոք ուշ չը դարձրեց նրա մինչև մահ անկեղծ սիրոյ խոստման, ոչ ոք ուշ չը դարձրեց նրա աղաչանք ու պատանք արտայայտող դէմքին։

«Մահ, մահ չնացողին», գոչեց խուռն բազմութիւնը։

Յանցաւորը դողաց, սարսռեց. ահա մի րոպէ ևս և նա

քարակոյտով կը ծածկուի։ Բայց ինչո՞ւ չեն վերջացնում իրանց դատաստանը, ինչո՞ւ են երկարացնում իր տանջանքը։ Նրա կապտած շրթունքները, այլայլուած, յուզուած դէմքը, ցանցրիւ թափթփուած մազերը, կարծես, անխօս ասում էին՝ «վերջացրէք, անբարոյականին քարակոյտով ծածկեցէք»։

Բայց չէ, կարծես, նրա սրտում յոյսի մի նշոյլ ծագեց. ահա նա արհամարհական ժպիտը շրթունքներին՝ հեգնական հայեացք գցեց ամբոխի վրայ, գլուխը չարժեց, երեսն ի վար թափթփած գանգուր վարսը դէս-դէն արաւ և համարձակ քայլեց. ասես, նա կախաղանի էր դիմում գաղափարի համար մարտնչողի նման։

Ինչո՞ւ նա համարձակ կերպարանք առաւ, ինչո՞ւ սկսեց ամբոխին ատել, ինչո՞ւ մինչև անգամ Իսրայէլի Աստուծու արդարադատութեան վրայ կիսով չափ կասկածեց։

Մ'ինէ չը գիտէր բարոյականութեան երդուեալ պաշտպան քահանայապետների, դպիրների, փարիսեցիների անառակ կեանքը։ Մ'ինէ չէր տեսնում անմեղութեան դիմակով պաշտպանուած նրանց վաւաշոտ արատայայտութիւնը։ Իսկ ամբոխը..., ամբոխին էլ լաւ էր ճանաչում. արդեօք չը գիտէր թէ ինչու կանայք թքում, անէծք-պղէծք են թափում և հեռանում զայրացած, կատաղի փրփուրը բերաններին։ Արդար զայրոյթ էր— Ո՜հ, ոչ, Նա լաւ գիտէր, որ նրանք իրանց տեղն են մաքրում, իրանց կեղծ բարոյականութեան խոնաւած, գոյնը թռած փայլն են նորոգում։ Ահա մարդիկ, նրանք, որոնք ոչինչ չէին խնայում միայն թէ նրա սիրալիր քնքոյշ ժպիտին արժանանան, այժմ Մովսէսի պատգամը՝ «Մի չնար» բերաններն առած՝ անառակին, յանցաւորին քարկոծել են կամենում։ Աստուած, արդարադատ Աստուածն էլ նրա աչքում, կարծես, այն չէր, ինչ որ երէկ, միւս օրը. մ'ինէ Նա, որ ձեռնհաս է անքննելին քննելու, անտեսանելին տեսնելու, այժմ պիտի աչքերը փակի ամբոխի մեղքերի, յանցանքների համար և միայն իր յանցանքը տեսնի...։

«Մահ, մահ չնացողին, քարկոծել, քարակոյտով ծածկել ամառակին», դարձալ գոչեց ամբոխը։

Կին յանցաւորը, ցնցուած յանկարծ յետ նայեց. մոռացաւ այն բոլորը, ինչ որ մի քիչ առաջ պատկերացաւ նրա մտքի առաջ, հեգնական ժպիտը մի ակնթարթում փոխուեց և սկսեց աղերսող, անհանգիստ աչքերով դէս-դէն նայել։ Նա վնտռում էր մէկին. ապերևս մի աղօտ լոյս փայլեց նրա աչքերում։ Ահա, ահա գտաւ, ականջներին չը հաւատաց, երբ լսեց «քարկոծել» է ձայն տալիս և իր սիրելին։ Նա ձեռքերը տարածեց, նրանից

օգնութիւն խնդրեց անխօս, բայց սիրելին զղուանքով երեսը չուռ տուաւ և աւելի զայրացած դէմք առնելով գոչեց՝ «քարկոծնք անառակին, քարակոյտով ծածկնք չնացողին»։

Կինը յետ յետ քաշուեց, նրա ծնկները ծալուեցան, սևացան աչքերը, երկիրը ոտերի տակ չարժուեց, գլուխը պտոյտ եկաւ և նա այդ ժամանակ միայն կարողացաւ իր ամբողջ էութեամբ Աստուծու լոյսը աչխարհը անլծել. թքեց ամբոխի վրայ և կերկեր, հազիւ հազ լսելի ձայնով ինքն էլ ասաց՝ «քարկոծեցէք անբարոյականին»։

Ո՞ւմ դիմի, ուր օգնութեան կանչի, աղաչանք ու պաղատանքին ուշ դարձնող չը կայ, մտածում էր նա ուշի գալով, արդարադատ դատաւորները... Ներել անկարելի է։ Չը կայ արդարութիւն։ Ցանցաւոր է...։ Բայց ով չի յանցաւոր։ Ո՞վ սովրեցրեց իրան այդ անսակ կեանքը... Անմեղ էր, ինչպէս աղաւանի, սիրտը մաքուր էր, ինչպէս կապոյտ երկինքը։ Բայց ով հանեց իրան ճանապարհից, ով իր անմեղութիւնը, սրտի մաքրութիւնը կեղտոտեց։ Ահա, ահա այն քահանայապետը, ահա այն դպիրը, ահա այն փարիսեցին և ահա վերջապէս այս զղուելի հարուստ երիտասարդը։ Նրանք չքին, որ մէկ մէկուց ծածուկ տիրեցին իր սրտին, քամեցին իր կենսական ոյժը, ծծեցին վարդ չքնաղների մաքրութիւնը և թողեցին իրանց գարշելի բնրանների անբարոյականութեան հետքերը։ Այժմ ինքը անբարոյական է, այժմ ինքը անառակ է և բռնուած այդ յանցանքի մէջ... պէտք է քարկոծել...։ Իսկ եթէ չը բռնուէր, իսկ եթէ այդ կեղծաւոր գարշելի ժողովրդի անաստուած դատաւորը մինակ, առանց ուրիշների ներկայութեան բռնէր յանցանքի մէջ, միթէ դեղին ոսկինները կամ մի կեղծ համբոյր չէր փրկի իրան քարկոծելուց։ Իսկ այն հարուստ երիտասարդը, որի հետ բռնուել է, միթէ նա պիտի ազատ, համարձակ ապրի և ինչպէս բարոյականութեան նախանձախնդիր, պատուաւոր քաղաքացի, արդար զայրոյթը դէմքին, իրաւունքով պահանջի՝ «քարկոծնք անբարոյականին»։ Միթէ երկուսի յանցանքներն էլ մէկ չէ. ինչով, ինչով է զանազանւում երկու յանցանքները։ Եթէ քարկոծում են իրան, պիտի քարկոծեն և նրան, պիտի քարկոծեն և այն քահանայապետին ու դատաւորին, պիտի քարկոծեն և այն դպիրին ու փարիսեցուն... Նա, ինքը կին է ստեղծուած, ահա գաղտնիքը, միայն իգական սեռն է, որ չնանալ գիտէ, միայն իգական սեռն է, որին կպչում է անառակ անունը, իսկ արուն, իսկ այդ հրէշ տղամարդը, այդ բարոյապէս խեղաթիւրուած սեռը իրան համարում է մաքուր, մաքուր, ինչպէս հրեշտակ...։

«Ո՜ւհ, ատելի աշխարհ, զզուելի մարդիկ, անաստուած դատաւորներ...։ Ջը կայ արդարադատութիւն, չը կայ Աստուած»։

«Մեղայ քեզ Աստուած, կուրծքը ծեծելով առաջ անցաւ մի փարիսեցի. Տէր, Դու խնայիր մեզ անմեղներիս։ Սուրբ քաղաքի աստուածասէր ժողովուրդ, չնացողը, որ այսօր անառակութեան մէջ է բռնուել, այժմ էլ աչկարայ ուրանում է Աստուծոյ՝ մեզ ամենուս ստեղծող Աստուծոյ գոյութիւնը։ Ո՜հ, այլ ևս անկարելի է համբերել, ժամանակ է, քարկոծենք անառակին. թող նրա մեղսալիր, զազրելի դիակի վրայ կուտակուած քարակոյտը վկայ լինի մեր առաքինի կեանքի և արդարադատ վարմունքի։ Թող տեսնի մեր յետագայ սերունդը այդ քարակոյտը և հետևի իր բարոյական նախնիքների օրինակին»։

«Ինչ էք ասում, Նա—չնացողը ուրացաւ Աստուծոյ գոյութիւնը, գաւազանը ամուր բռնած մօտեցաւ քահանայապետը, աչխարհիս վերջը մօտեցել է. պատուիր, գետին, մեր ոտերի տակ, հուր և ծծումբ թափիր, Ստեղծողդ Սրբենակարող, մեր մեղաւոր գլուխներին։ Այս ինչ ենք տեսնում. այս ինչ օրի հասանք։ Լսեցէք, բարձրաձայն աղդարարեց քահանայապետը յուզուած դէմք առնելով, չնացողը ուրացաւ Աստուծոյ գոյութիւնը, վերջացրէք, քարակոյտով ծածկեցէք նրա դիակը. բայց թոյլ տուէք անմեղներիս համար Աստուծուն աղաչեմ ծնկաչոք, որ իր երկնառաք պատուհասը մեր գլխից հեռու տանի»։

Բարոյականութեան երդուեալ պաշտպանները չըլսապատեհին յանցաւորին. չը գիտէր ում պատասխանէր. Նրան քաչքչում էին մի կողմից դատաւորները, միւս կողմից դպիրներն ու փարիսեցիները էին նրան ստիպում յետ առնել բոլորի առաջ իր խօսքը. երրորդ կողմից քահանայապետներն էին գաւազանները ձեռներին երկիւղ տալիս և Աստուծու անէծքը թափում նրա գլխին։ Իսկ յուզուած ամբոխը, ինչպէս ժահրագոյն դիզացած ալիք, կատաղի փրփուրը բերանին «չնացողը ուրանում է Աստուծու գոյութիւնը» գոռալով, քարերը ձեռներին յարձակուեցան յանցաւորի վրայ։ Այլ ևս ոչ մի յոյս չը մնաց ապրելու, վճռուեցաւ. անխուսափելի է նրա քարկոծուելը։ Յանցաւորը մերթ սուզւում, կուլ էր գնում կատաղի ալիքների որովայնում, մերթ աւազի ու փոչու մէջ կորած վեր բարձրանում և իրան կորցրած խռպոտ ձայնով մաղձը թափում ամբոխի գլխին։ Լըսւում էր այդ աղմուկի միջից. «չը կայ արդարադատութիւն, չը կայ Աստուած...։ Քահանայապետներից սկսած մինչև այն ստոր ծառան, աղախինը անբարոյական չնացողներ էք... դուք ապրում էք և անառակ ապրողներդ, դատաւոր դարձած գլխիս, քարերը ձեռներիդ, ինձ պիտի քարկոծեցէք. դէ քարկոծեցէք, այլ

ևս չեմ վախենում, քանի չունչս բերանումս է, ևս բարձրաձայն կ'ասեմ՝ չը կայ արդարադատութիւն, չը կայ Աստուած»։

Քահանայապետները, դպիրները, դատաւորները, փարիսեցիները չընչացին իրար ակռնջի, նշաններով խօսեցին և համաձայնեցաւ դեռ ևս չը քարկոծել յանցաւորին։ Նրանք հեռուից նշմարել էին Յիսուսին նստած տաճարի առաջ և կամենալով Նրա վրայ ամբաստանութիւն բարդել՝ յանցաւորին Նրա մօտ տարան։

II

Յիսուս նստած տաճարի առաջ քարոզում էր ժողովրդին։ Քահանայապետները, դատաւորները յանցաւորին կանգնեցրին Յիսուսի առաջ և առային. «Վարդապետ, այս կինը յայտնի կերպով չնացել և բռնուել է։ Եւ Մովսէս իր օրէնքի մէջ պատուիրել է մեզ այդպիսիներին քարկոծել, հիմա Դու ինչ ես ասում դրա համար»։

Յիսուս ոչինչ չը պատասխանեց, անվրդով, գլուխը ցած, մատով գրում էր գետնի վրայ։

Կին յանցաւորը արհամարհանքով, հեգնական, կծու ժպիտը բերանին կանգնեց Յիսուսի առաջ և առանց ուշադրութիւն դարձնելու ուզում էր ասել՝ «Դէ չուտով, Դու էլ ազդարարիր՝ «քարկոծեցէք անբարոյականին», բայց յանկարծ հէնց որ աչքերին ընկաւ Նրա խոր թափանցող, վճիտ, խաղաղ աչքերի վսեմութեամբ ու վեհութեամբ հաւակուած անհուն բարութիւնը, երբ Նրա մարմնացեալ հեզ ու առաքինի դէմքը տեսաւ, լեզուն պապանձուեց, հեգնական ժպիտը մի վայրկեանում չքացաւ, չը կարողացաւ այլ ևս Նրա ազդու, արդարադատութիւն արտայայտող հայեացքը տանել։ Աչքերի առաջ պատկերացաւ իսկոյն և եթ իր անբարոյական կեանքը կենդանի գոյներով նկարուած, նա կուչ եկաւ այդ պատկերի առաջ, սարսուռ զգայ ներսը, այլայլուեց, զզուեց իրանից իր ոչնչութիւնը տեսնելով, ջուխտ ձեռքերով պինդ ծածկեց երեսը և ինչպէս կը ցանկանար այդ տեղից փախչել, որպէս զի այլ ևս չը տեսնի այդ մաքուր հայեացքը։

Նա ոչինչ չի պատասխանում, բայց Նրա լռութիւնը, Նրա սնապահման բարութիւնը, անհուն վեհութիւնը աւելի սարսափելի է, քան քարկոծուելը...։ Ա՜խ, եթէ նա հրամայէր հէնց այս րոպէին իրան քարկոծէին... այլ ևս չէր տանջուի, այլ ևս չէր ապրի այդ վեհ, բարի, աշխոյժ, անմոռունչ Մարդուց կը հանգըստանար... Չէ, անտանելի է իր գրութիւնը, զզում է այդ զո-

բութեան ծաւրութիւնը, ահա արագանում է սրտի բաբախը, ահա չորանում, խանձւում է շնչափողը մի ակնթարթ ևս... և ինքը ուշքից կը գնայ....

Սեւայան նրա աչքերի առաջ ամեն ինչ և նա խեղդուած հազիւ հազ լսելի ձայնով դիմեց ամբոխին՝ «քարկոծեցէք խընդրում եմ»։

Կինը մի քանի չարժումներ գործեց. նա, կարծես, ուզում էր միևնոյն ժամանակ թէ վախչել և թէ իրան խեղդել թաշկինակով. չը յաջողուեց նրան այդ փորձը. նա, անմեղ երեխայի պէս, ծնկաչոք ընկաւ Ցիսուսի առաջ. յամքած աչքերը, արհաւատական արտասուքի սովոր աչքերը վաղուցուայ, անգառնալի կերպով անյայտ գնացած տարիների բնական դերի մէջ մտան.—անկեղծ արտասուքի աղբիւրները բացուեցան։ Նրա լացը, նրա հեկեկանքը սրտի խորքիցն էր բղխում, նրա արտասուքը, նրա հառաչանքը մանկութեան անմեղ օրերն էին յիշեցնում, գլորւում էին ջերմ արտասուքների խոշոր կաթիլները, կարծես գլորւում էին և սրտի վրայ չերտ չերտ նստած յանցանքները։

Քահանայապետները երկրորդեցին իրանց հարցը և ստիպեցին Ցիսուսին պատասխանել։ Այդ ժամանակ Ցիսուս գլուխը վեր բարձրացրեց և ասաց. «Ով ձեզնից անմեղ է, թող առաջ նա՛ քար գցի դրա վրայ»։

Ցիսուս վերջացրաւ խօսքը և առանց ուշադրութիւն դարձնելու չրջապատուած ամբոխի և կնոջ վրայ, չարունակեց անվրդով գրել գետնի վրայ մատով։

Ի՞նչ պատահեց. այս ինչ մնռելային լռութիւն տիրեց չորս կողմը. ո՞ւր են բարոյականութեան երդուեալ պաշտպանները, ո՞ւր են, ինչ եղան բարոյականութեան նախանձախնդիր քաղաքացիք. ինչո՞ւ են իրարից ամաչում, ինչո՞ւ, ինչո՞ւ քարերը ձեռներից վար գցեց խաժամուժ ամբոխը։

Օտարոտի, անբնակին, չը տեսնուած երևոյթ... մարդիկ առաջի անգամ տեսան միմեանց իրանց սեփական պատկերներով և իրարից ամաչելով, գլխիկոր, աղուէսների նման քըսսալի պատերի տակով անցան, անհետացան...

Կարծես, հերոսի հմուտ, ուժեղ ձեռքի սուրն էր չողացել կայծակի արագութեամբ նրանց հպարտ-հպարտ տնկած գլուխների վրայ. կարծես, եփուած վարպետի ձեռքն էր ընկել նրանց բարութեամբ և առաքինութեամբ ոսկեջրած դէմքերը։ Կորան հպարտ գլուխները, թառաւ կեղծիքը պաշտպանող ոսկեջուրը։

«Ահա արդարադատ Դատաւորը. չէ, ես սխալուած եմ, կայ աչխարհում դեռ ևս արդարադատութիւն։ Այո, միայն Սա

է արդարադատ, միայն Սա է բարձր, քան իմ բոլոր համաքաղաքացիները։ Սա մի պաշտելի անձնաւորութիւն է. ես կը ծառայեմ Սրան. ես հէնց այժմեանից թողնում եմ իմ զգուելի կեանքը և դառնում սորուկը այս Մեծ Մարդուն։ Ի՜նչպէս թեթև եմ զգում ինքս ինձ. կարծես, անցած գնացած անմեղ օրերս նորից վերադարձած լինէին և դեռ չեմ ճանաչում այդ գաբչելիներին. ինչպէս քաղցր է, ինչպէս ազատ եմ չնչում. կարծես Նա իմ ամենամօտիկ անձնաւորութիւնը լինի և այժմ կարծես կարող եմ ազատ Նրա աչքերին նայել...»։

Այսպէս մտածում էր կինը, երբ Ցիսուս հարցրեց.

—Կի՛ն դու, որտեղ են, քեզ ոչ ոք չը դատապարտեց։

—Ո՛չ, Տէր, պատասխանեց կինը։

—Ես էլ չեմ դատապարտում քեզ. գնա և սրանից յետոյ էլ մի մեղանչիր։

Ս. Մ.-ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՑ